Արձանագրություն N 2

«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-85» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» հոկտեմբերի 2021 թ. ժամը 10:00-ին

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի.

Նախագահ՝ Ս. Զաքարյան

Անդամներ՝ Ն. Խաչատրան, Թ. Վարդանյան

Քարտուղար՝ Վ. Պողոսյան

Բացակայում է. Թ. Վարդանյան

Օրակարգ.

**«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-85» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի անցկացում և արդյունքների հաստատում**

**Ընդունել ի գիտություն, որ՝**

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել և հիմնավորումներ չեն ներկայացվել:

1. **«ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-85» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
   քարտուղարի կողմից 10:00-ին հայտերի գրանցամատյանը փակելուց հետո, նախագահը հրապարակել նախահաշվային գները:
2. **Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|
| 1. | «Լիմուշ» ՍՊԸ | ք. Երևան, Դավիթ Մալյան 45, հեռ. 098-54-68-74, e-mail: sales@limush.am |
| 2. | ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ | ք. Երևան Ահարոնյան 12/3, հեռ. 060-54-49-56, e-mail: uskentrongnumner@mail.ru |
| 3. | «Սեկո Պրինտ» ՍՊԸ | ք. Երևան, Բաբաջանյան, 3/9, հեռ. 094-68-70-69, e-mail: info@seko.am |

3. **Տվյալներ ծրարը կազմելու, ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին և բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

մասնակից ընկերությունների կողմից ներկայացված ծրարները կազմված են «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-85 ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: «Լիմուշ» ՍՊԸ, ՀՀ ՊԵԿ «Ուսումնակա կենտրոն» ՊՈԱԿ և «Սեկո Պրինտ» ՍՊԸ ընկերությունները ներկայացրել են.

- դիմում-հայտարարություն գնանշման հարցման մասնակցելու,
- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր,
- գնային առաջարկ:

Վերոնշյալ կազմակերպությունների ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 2 օրինա պատճեններից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

4. **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջների համապատասխան կազմած լինելու մասին.**
   Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են «ԳՀԱՇՁԲ-ՀՎԿԱԿ-2021-85 ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

5. **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/.**

ընթացակարգի հրավերով սահմանված կարգին բավարարող մասնակիցների գնային առաջարկները ներկայացված են կցված հավելված N 1-ում:

Որոշում.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետը և «Գնումների մասին» օրենքի 38-րդ հոդվածը, հրավիրել միաժամանակյա գնային բանակցություններ, որը կկայանա սույն թվականի հոկտեմբերի 28-ին ժամը 11:00-ին ք.Երևան, Մ.Հերացի 12 հասցեում:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Ստորագրություններ.
Գնահատող հանձնաժողովի
Նախագահ՝ ______________________ Ս. Զաքարյան

______________________ Ն. Խաչատրյան

Քարտուղար՝ ______________________ Վ. Պողոսյան

Հավելված N 1
N 2 արձանագրության

| Հ/հ | Ապրանքի անվանումը | Չ/մ | Քանակ | Նախահաշվային գին | «Լիմուշ» ՍՊԸ | | ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ | | «Սեկո Պրինտ» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գումար | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ | առանց ԱՀՀ-ի | ԱՀՀ-ն ներառյալ |
| 1 | Կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ կանխարգելիչ պատվաստումների քարտ | հատ | 1,500,000 | 9,300,000 | 9,375,000 | 11,250,000 | 7,937,500 | 9,525,000 | 7,840,000 | 9,800,000 |